ներ նշմարվում են։ Արձանագրությունները դարձյալ փորագրված են Արտաշեսի անունից, որն իրեն անվանում է «արքա Երվանդական», սակայն նրա անունը նախորդ արձանագրությունների 'RTHŠSY-ի՝ ձևից տարբերվում է և, հավանաբար, գրված է հունական ձևով՝ 'RTKSRKSSY (Արտաքսերքսես)։ Արտաշես Առաջինի հոր անունն ըստ երևույթին բացակայում է։ Չի բացառվում, որ կլինեն նոր անուն (թերևս անուններ), պաշտոնների անուններ (կամ տիտղոսներ), նոր բառեր, նոր իմաստներ։ Այդ ամենի վերծանությունը թողնում ենք արամեերենի գիտակներին։ Առայժմ կարելի է միայն ենթադրել, որ նախորդներից գրեթե եռակի ընդարձակ այս արձանագրությունները կարևոր տվյալներ են պարունակում և կարող են ավելի որոշակի բացահայտել նախորդների իմաստը, լույս սփռելով դեռևս՝ չպարզված խնդիրների վրա։ Ուշադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ այս նորահայտ արձանագրությունները ընդարձակում են «Արտաշեսյան սահմանաքարերի» տարածման շրջանակները՝ Սևանա լճի հարավարևելյան ափերից և Այունիքից բացի ընդգրկելով նաև պատմական Այրարատի Վարաժնունիք գավառը։

Գ. ԿԱՐԱԵԵԱՆՅԱՆ

Մ. Թ. Ա. VI—III ԴԱՐԵՐԻ ՎԱՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՍԵՐԻ ՄԻ ԽՈՒՄԲ

Տարիների ընթացքում Արմավիրի և Տառնիի սիստեմատիկ պեղումների և Հայաստանի տարբեր վայրերում պատահական հայտնաբերումների շնորհիվ հավաքվել է գգալի քանակությամբ հին հայկական խեցեղեն, որն ըստ կիրառական նշանակության, ձևերի, մշակման և հարդարման եղանակների, կարելի է բաժանել զանազան խմբերի։ Մեծ է, մանավանդ, կենցաղային խեցեղենի քանակը, որը ներկայանում է երեք հիմնական խմբերով՝ կոպիտ, դորշ խոհանոցային, սովորական-հասարակ և նրբախեցի-բարձրորակ։ Երեք խումբն էլ հանդես են բերում տեսակների մեծ բազմազանություն՝ մեկ կանոցային, սովորական-հասարակ և նրբախեցի-բարձրորակ։ Երեք խումբն էլ հանդես են բերում տեսակների մեծ բազմազանություն՝ մեկ կան-



Նկ. 1



Նկ. 2

թանի սափորներ, ջրաման-տափաշշեր, ծորակավոր ջրամաններ, սկահակատիպ բարձր անոթներ, ուռուցիկ իրանով խոշոր կճուճներ, միջին ու փոքր չափերի կուլիկներ, դավաթ-ըմպանակներ, սկուտեղներ և, վերջապես, թասերի տարբեր տեսակներ։

Հավաքված նյութի բավարար քանակը այժմ հնարավորություն է տալիս քննության առնելու խեցեղենի այս կամ այն առանձին խումբը կամ տեսակը։ Ներկա հոդվածում քըն-

նության է առնվում խեցեղենի երրորդ՝ նրբախեցի խմբին պատկանող թասերի մի տարատեսակը, որը ամբողջական նմուշներով և բեկորներով հայտնաբերվում է Արմավիրի պեղումներից։

Այս թասերն ունեն 5—8 սմ բարձրություն, իրանի ամենալայն մասին հավասար շուրթ (տրամագծերը տատանվում են 21,5 սմ— 25 սմ միջև) և համեմատաբար փոքր նստուկ (տրամ. 7—9,5 սմ)։ Թասերի մինչև մեկ սմ լայնության շուրթը մի կողմից հակվում է ներս, իսկ դրսից ելուստ է կազմում մեկից-երկու սմ լայնքի ներճկված ակոսի վրա, որը կողի հետ սուր եզր տալով, սահուն անցնում է դեպի հարթ նստուկը (նկ. 1, Արմավիր 1964/33, 1966/46, 1967/36, 54, 1968/39, 40, 43, 51 և այլն)։ Իհարկե, առանձին թասեր ունեն մասնակի տարբերություններ՝ երբեմն ակոսն ավելի լայն է (նկ. 2, Արմավիր 1964/93, 1966/46, 96, 1968/68, Դառնի 1969/89), երբեմն շնչին է կամ համարյա բացակայում է (նկ. 3, 4, 5, 6, Արմավիր 2287/9, 1964/83, 1966/48, 1967/49, 1968/15, 1969/74, 79, 1969/98)։ Թասերի շուրթերը ևս լինում են ավելի լայն կամ նեղ, թույլ կամ ուժեղ ընդգծված ելուստ-եզրերով, սակայն այս ամենը էական փոփոխություն չի մտցնում նրանց ընդհանուր նկարագրի մեջ։

Թասերի ընդհանուր ֆոնը կարմիր կամ բաց շագանակագույն է, լավ փայլեցրած, որի վրա ավելի մուգ կարմրով, շագանակագույնով կամ սևով ներկված կամ զարդարված են շուրթերը, իսկ ներքին մակերեսի վրա պսակի տակից իջնում են նույն գույնի 4—6 շերտեր, որոնք հատակի կենտրոնում միանալով առաջացնում են խաչ կամ միակենտրոն ճառագայթաձև պատկեր։ Թասերի հարդարման այս ընդհանուր կանոնից չեզվում են 3 թաս (նկ. 4, 5, 6)։ 1966/48 նմուշը հարթ կտրուկ շուրթին կարմիր ֆոնի վրա ունի սևով արված շղթայաձև զարդ, 1969/79-ի մոտ բաց մարմնագույն շուրթի վրա ալ կարմիր լոտոսաձև զարդ է արված, իսկ 1969/26 թասի բաց օխրայագույն ֆոնի վրա սև զարդերով հարդարված են թե՛ շուրթը, թե՛ ներքին մակերեսը։ Շուրթի վրա արված ուղիղ, իրար զուգահեռ գծերը անկյունագծով իրար են միանում ավելի բարակ, ալիքաձև գծերով, իսկ հատակի կենտրոնում արված է շղթայաձև զարդ՝ երկու կողմից առնված երեք զուգահեռ ուղիղ գծերի մեջ, իսկ սրանց վրա էլ հենվում են երեքական եռանկյուններ՝ կատարված ուղիղ, ալիքավոր և եղեսնաձև գծերով։

Մեզ հետաքրքրող թասերի խմբին կարելի է դասել նաև Վաղարշապատի թանգարանից բերված խաչաձև զարդ կրող թասը (ինվ.



Նկ. 3

Նկ. 4

№ 5151[1], Արտաշատի շրջանի Աղբաշ գյուղից գտնված (ինվ. № 1393) և Դառնիի դամբարան-

[1] Տ. Ա. Տիրացյան, Հին հայկական գունավարդ խեցեղեն, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1970, № 1, էջ 70։

ներից մեկում հայտնաբերված փոքրիկ թասիկները։ Այս վերջին երկուսի զարդամոտիվները ավելի հարուստ են և շուրթի կարմիր ներկի վրա տարված են շագանակագույն զուգահեռ կամ խաչաձևվող գծիկներ։





Նկ. 5

Թասերը պատրաստված են կարմրա-դեղնավուն կավի լավ տրորված-հունցված խառնուրդներից մաքրված շաղախից, ավազի որոշ քանակի պարունակությամբ։ Բացի մեկ-երկու դեպքերից, Բասերը, որպես կանոն, նրբախեցի են, սահուն անցմամբ շրթից կողին և հատակին, որը թույլ է տալիս ասելու, որ դրանք ձևավորվել են արագ պտտվող դրգի վրա։ Ելծումը ուժեղ և տևական կրակով չի արված, այդ պատճառով խեցու միջուկը գորշավուն է։ Ճառագայթաձև և մյուս զարդանախշերը լավ պահպանված և ձուլված են խեցուն։ Զարդը արված է երկաթի օխրայով, որը հեշտ է ձուլվում և ամուր նստում է խեցու վրա։ Այն առատորեն հանդիպում է կավի շերտերում, տալիս է տարբեր երանգներ՝ բաց սանգինից մինչև մուգ կարմիր, երբեմն էլ հասնում գորշի։ Այս բոլոր տարափոփոխվող երանգները հանդիպում են քննարկվող թասերի և գունազարդ խեցեղենի բոլոր տեսակների վրա, հաղորդելով նրանց բազմազանություն և շքեղություն։ Արմավիրում հիշյալ թասերը հանդիպում են թե՛ հողի մակերեսին, թե՛ շերտում։ Պետք է ասել, որ Արմավիրի հնագիտական շերտերի որոշումը մեծ դժվարություն է ներկայացնում բլրի լանջերի կտրուկ իջվածքի, դարերի ընթացքում այդ լանջերի հողմնահարման, ավելի հին շրջանի՝ տվյալ դեպքում ուրարտական կառույցների եռուրարտական ժամանակաշրջանում օգտագործված լինելու և, վերջապես, միջնադարյան հորեր և թոնիրներ փորելու պատճառով։ Այժմ կոպիտ շերտագրությամբ առավել որոշակի առանձնացվում է 3 հիմնական շերտ՝ միջնադարյան, ուրարտական և նրանց միջև ընկած ընդհանուր՝ վաղ հայկական ու հելլենիստական[3]։ Այս շերտերի որոշմանը հատկապես օգնում են բլրի հյուսիս-արևմտյան լանջի քառակուսիների պեղումները։ Այստեղ հողի մակերեսից 0,5—0,8 մ խորության վրա։ ընկած է միջնադարյան շերտը՝ իրեն բնորոշ մանր քարերից անխնամ շարված պատերով, թոնիրներով, հորերով, հասարակ ու ջնարակած խեցեղենով։ 0,8—1,0 մ խորությունից





Նկ. 6

---

2 Ժ. Դ. Խաչատրյան, Հայաստանում գտնված գունազարդ խեցեղենի մի քանի նմուշներ, ՊԲՀ, 1966, № 1, էջ 255, տախ. 4, նկ. 1, 3։

3 Г. А. Тирацян, О расписной керамике древней Армении (VI в. до н. э.—III в. н. э.), ПБЖ, 1965, № 3, էջ 265։

սկսվում է հին հայկական ու հելլենիստական շերտը՝ բազալտե և կարմիր խարամաքարից շարված հիմնապատերով, որոնք հաճախ ուրարտական ծագում ունեն, անզարդ ու գունազարդ խեցեղենով։ Այս շերտի հաստությունը երբեմն մեկ և ավելի մետր է։ Այս շերտի նյութերի հետ խառը կամ նրանց տակ հանդիպում են ուրարտական խեցեղենի նմուշներ։ Ներկա հոդվածի քննության առարկա թասերը հայտնաբերվում են ահա այս միջին շերտում։

Առաջին հայացքից մեր թասերը այն աստիճան նման են ուրարտական լավ հայտնի, կարմիր, փայլեցրած թասերին (նկ. 7), որ նույնիսկ կարելի է շփոթել դրանց հետ։ Երկու տիպի թասերն էլ հարթ կտրած շուրթ և փոքր հատակ ունեն։ Անգամ չափերը տատանվում են նույն շրջանակներում (ուրարտական թասերի բարձր. 4—5 սմ է, շուրթը տրամ՝ 18—21 սմ, նստուկի տրամ.՝ 5,5—7 սմ. տե՛ս օրինակ կարմիր բլուր 2201/1, 2205/44 և այլն)։ Ուրարտական թասերի շուրթերը ևս հակված են ներս և դրսից շրթի տակ ունեն ակոս։ Միայն թե մեր թասերի վրա այս առանձնահատկությունները ավելի ընդգծված են, հատկապես նշված ակոսը։ Երկու տիպի թասերի պատրաստման նյութը ևս նույնն է. վերցված է նույն վարդագույն կավը, ավազի և ինչ-որ այլ նյութերի որոշ խառնուրդով, որոնք բարձր ջերմաստիճանում թրծելու պրոցեսում հալվում էին, առաջացնելով սև խայտեր։ Այս խայտերը առկա են թե՛ մեր, թե՛ ուրարտական թասերի և ընդհանրապես խեցեղենի վրա։ Սակայն մեր թասերի կավը առավել մանրահատիկ է, շաղախը՝ լավ հունցված, խեցին՝ նուրբ ու թեթև, որոշ դեպքերում էլ՝ զրնգուն։ Ուրարտական թասերի և նրանց պատող անգորի պատրաստման համար վերցվում էր միևնույն կավը, բայց անգորի կավը ենթարկվում էր հատուկ, նախնական մշակման։ Այն թրծվում էր բարձր ջերմաստիճանի տակ, հետո թրծած մասսան մանրվում էր, փոշիացվում, բացվում ջրով և անոթի թրծումից առաջ քսվում անոթին[4]։ Ուրարտական թասերը ամբողջապես են ծածկված այդ կարմիր անգորով, ուստի հավանաբար թասը ամբողջությամբ իջեցվում էր անգորով լի մեծ անոթի մեջ և անգորը նստում էր հավասար շերտով։ Թրծումից առաջ և հետո թասը խնամքով կոկվում և փայլեցվում էր քարե կոկիչով։ Իսկ մեր թասերի հիմնական ֆոնը բաց դեղնա-կարմրավունից մուգ շագանակագույն է։ Դա հենց թասերի նույն կավից պատրաստված լուծույթն է, որ թասին էր քսվում և փայլեցվում մինչև թրծելը։ Մակերեսի վրա որոշակի երևում է այդ փայլեցման շերտը, նկատվում քսող ձեռքի շարժումների ռիթմը, քանի որ տեղ-տեղ ավելի է փայլեցված և թրծման ժամանակ այդ տեղերում երանգը ավելի ցայտուն է ստացվել։



Նկ. 7

Ուրարտական թասերի նախօրոք թրծված և թանձր անգորը չի ձուլվում խեցուն, ինչպես մեր թասերինը, այլ խեցու վրա նստում է կարմիր փայլուն շերտով, որը պարզ երևում է կոտրվածքում և հեշտությամբ պոկվում է։

Հետևաբար քննարկվող թասերը, առաջին հայացքից նման լինելով ուրարտականներին, միաժամանակ նրանցից տարբերվում են թե՛ արտաքին ձևավորման, թե՛ մշակման, փայլեցման ու անգորապատման առանձնահատկություններով։ Այս հանգամանքը մեզ բերում է այն եզրակացության, որ հիշյալ թասերը, սերելով ուրարտական թասերից, հանդիսանում են նրանց օրգանական շարունակությունն ու զարգացումը ետուրարտական ժամանակաշրջանում, V—III դարերում մ. թ. ա.։

Այս եզրակացության օգտին է խոսում այն փաստը, որ մեր թասերին զուգահեռներ չկան Հայաստանի հյուսիսային և հյուսիս-արևելյան շրջանների՝ Իջևանի, Շամշադինի, Ջրառատի, Աթարբեկյանի, Սևանի V—III դարերով թվագրվող նյութերի մեջ[5], որտեղ ուրարտական ազ-

[4] Lehman-Haupt, Armenien einst und jetzt, հատ. II, 1931, էջ 378։

[5] С. А. Есаян, Могильник раннеармянского времени в поселке Берд Шамшадинского района, ՊԲՀ, 1969, № 4, էջ 285; А. О. Мнацаканян, Г. А. Тирацян, Новые данные о материальной культуре Древней Армении, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1961, № 9, էջ 76, 78։

դեցությունը թույլ էր և զարգացումը շարունակվում էր առավելապես տեղական ավանդներով։ Զուգահեռներ չկան նաև հարավային շրջաններում և ընդհանրապես, ինչպես երևում է վերը նշված պատահական գյուտերից, Արարատյան դաշտավայրից դուրս առայժմ մեր թասերից չեն հայտնաբերվել։ Զուգահեռներ չկարողացանք գտնել նաև հարևան Ադրբեջանական ու Վրացական հանրապետությունների, Փոքր Ասիայի երկրների և Իրանի նույն դարաշրջանի հնավայրերի նյութերի մեջ[6]։ Մեր թասերի պրոֆիլն ունեցող թասեր հանդիպում են միայն Ուրմիա լճի հարավ-արևելյան կողմում գտնվող Հասանլու հնավայրի մ. թ. ա. VI—IV դարերով թվագրվող IIIA—IIIB շերտերում. ցավոք, հեղինակը ոչինչ չի հաղորդում դրանց հարդարման մասին[7]։ Ուշագրավ է, որ մեր թասերը Արմավիրում հայտնաբերվում են աքեմենյան մշակույթին բնորոշ համարվող թաս-ըմպանակների հետ, որոնց մի մասը կրում է նույն ճառագայթաձև զարդը։ Այս ըմպանակները լայնորեն հայտնի են վերը նշված երկրների հնավայրերից, իսկ Հայաստանում՝ Կարմիր բլուրից, Ջրառատից, Բերդից (Սամշադինի շրջան), Ցամաքաբերդից (Սևանի շրջան), Գառնիից և այլ վայրերից ու թվագրվում են մ. թ. ա. V—III դարերով, բայց զուրկ են վերոհիշյալ զարդից։ Այս ամենը մեկ թույլ է տալիս հանգելու մեկ եզրակացության ևս՝ որ քննարկվող թասերը ունեն տեղական բնույթ։

Արմավիրյան այս տիպի թասերի զգալի բանակը կարող է ապացույց լինել այն բանի, որ նրանք օգտագործվել են կենցաղում, որպես սեղանի սպասք։ Սակայն չի բացառվում որոշ օրինակների գործածությունը պաշտամունքային, ծիսական նպատակներով։ Ճառագայթաձև կամ խաչաձև զարդը իր ծագմամբ, թերևս, կապվում է դեռևս II հազարամյակից մինչև VI—V դարերը (մ. թ. ա.) Հայաստանում լայն տարածում գտած արևի և աստղերի պաշտամունքը խորհրդանշող խաչի, սվաստիկայի կամ բազմաթև ճառագայթներ ունեցող նշանների հետ։ Այդ նշանները լայնորեն կիրառվում էին զարդարանքի առարկաների, գոտիների, զենքերի և, վերջապես, խեցեղենի հարդարման մեջ։ Եթե նկատի ունենանք, որ Արմավիրը Հայաստանի ոչ միայն մայրաքաղաքն էր, այլև կրոնական կենտրոնը և այնտեղ կառուցված էին Արեգակին և Լուսնին նվիրված մեհյաններ[9], ապա այս թասերի մի մասի գործածությունը ծիսական արարողությունների ժամանակ անհավանական չի թվա։ Գուցե սկզբնապես նրանք ծիսական նշանակություն են ունեցել, ապա դարձել սեղանի սպասք, իսկ ճառագայթաձև զարդը ստացել է առավելապես դեկորատիվ նշանակություն։

Անկախ իրենց օգտագործման նպատակից, մեր քննարկման առարկա հանդիսացող թասերը իրենց հարդարման, արտաքին ձևավորման ներդաշնակությամբ և պատրաստման որակով ցույց են տալիս խեցեգործության զարգացման բարձր մակարդակը տվյալ դարաշրջանում։ Կառուցվածքային և դեղնաշագանակագույն ֆոնի զուգակցումը սև, կարմիր և բաց շագանակագույն զարդանախշի հետ և վերջինիս շերտերի աղատ ու լայն քսվածքները խոսում են կավանոթների նկարազարդման գեղանկարչական նոր, ավելի աղատ և համարձակ եղանակների գործադրության և խեցեգործ վարպետների բարձր ճաշակի մասին։

Արմավիրյան խաչաձև ճառագայթավոր զարդերով թասերը հանդիսանում են վաղ հայկական խեցեգործության ինքնատիպ նմուշների մի ուշագրավ խումբ, որը հարստացնում է մեր գիտելիքները այդ դարաշրջանի նվազ հայտնի նյութական մշակույթի վերաբերյալ։ Սերելով ուրարտական նախօրինակներից, այդ թասերը վաղ հայկական դարաշրջանում (V—III դդ. մ. թ. ա.) մշակվել և հարդարվել են դեղագիտական նոր մոտեցմամբ և ստացել են նոր որակ։

Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

---

6 И. В. Маикевич-Мустафаева. О раскопках в Мингечауре. Материальная культура Азербайджана, т. I. *աղ.* VI; И. Г. Нариманов. Находки баз колонн V—IV вв. до н. э. в Азербайджане, «Советская Археология», 1960, № 4; М. В. Менабде, Ц. О. Давлианидзе. Могильники Триалети, Тбилиси, 1968, *էջ 146, աղ.* XII *388*; Б. А. Куфтин Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941, *էջ 31, 42*; E. Schmidt, Persepolis II. 1958, *աղ. 68։*

7 C. Young, A comparative ceramic chronology for western Iran. 1500—500, B. C., vol. III. Iran, 1965. *էջ 54, նկ. 1, 3, 5։*

8 Е. А. Есаян. Ашулеты, связанные с культом солнца из Армении, СА, 1968, № 2, *էջ 260։*

9 *Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, 1881, Տփղիս, էջ 116—117։*